

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության միջև կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարությունը /այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր/,

ցանկանալով ամրապնդել և զարգացնել երկու երկրների և նրանց ժողովուրդների միջև բարեկամական կապերը,

համոզված լինելով, որ կրթության, գիտության ու մշակույթի, ինչպես նաև այլ բնագավառներում կատարվող փոխանակումները և համագործակցությունը կնպաստեն բրիտանացի և հայ ժողովուրդների միջև ավելի սերտ փոխըմբռնմանը և փոխձանաչմանը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն կրթության բնագավառում երկու երկրների միջև կապերի զարգացումը՝

ա) խրախուսելով և դյուրացնելով երկու երկրներում մարդկանց, հաստատությունների և կրթության հետ առնչվող կազմակերպությունների միջև անմիջական համագործակցությունը, կապերը և փոխանակումները,

բ) խրախուսելով և դյուրացնելով մյուս Պայմանավորվող կողմի լեզվի և գրականության ուսումնասիրումը և ուսուցումը,

գ) խրախուսելով և դյուրացնելով համագործակցությունն ու փոխանակումները ուսուցման մեթոդների և նյութերի, ուսումնական ծրագրերի զարգացման և քննությունների կազմակերպման շրջանակներում,

դ) ապահովելով կրթաթոշակներ և նպաստելով ուսումնառությունն ու հետազոտությունը դյուրացնող այլ միջոցներին:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն և դյուրացնեն գիտության և տեխնոլոգիայի բնագավառներում փոխանակումների և հետազոտությունների զարգացումը փոխադարձ

հետաքրքրություն ներկայացնող խնդիրների շուրջ, ներառյալ երկու երկրներում գիտական և հետազոտական ինստիտուտների միջև անմիջական համագործակցությունը:

Հոդված 3

Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն և դյուրացնեն գրականության, կիրառական արվեստի, կատարողական արվեստի, կինոյի, հեռուստատեսության և ռադիոյի, ճարտարապետության, թանգարանների և պատկերասրահների, գրադարանների և արխիվների ու այլ մշակութային բանազավառներում անմիջական կապերը:

Հոդված 4

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ Համաձայնագրի նպատակներից բխող գործունեության կազմակերպման և իրականացման համար պետք է խրախուսի իր տարածքում մյուս Պայմանավորվող կողմի մշակութային և տեղեկատվական կենտրոնների ստեղծումը և պետք է ստեղծի բոլոր պայմանները իր օրենսդրության և հնարվորությունների սահմաններում, որպեսզի օգնի այդպիսի կենտրոններին: «Մշակութային և տեղեկատվական կենտրոններ» արտահայտությունը իր մեջ պետք է ներառի դպրոցները, լեզվի ուսուցման հաստատությունները, գրադարանները, գյուտարարական կենտրոնները և այլ հաստատություններ, որոնք կարող են ծառայել սույն Համաձայնագրի նպատակներին:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն երկու երկրներում մամուլի և հրատարակչական կազմակերպությունների միջև անմիջական համագործակցությունը:

Հոդված 6

Պայմանավորվող կողմերը պետք է դյուրացնեն ազգային ժառանգության պահպանման միջոցառումների մասին տեղեկատվական փոխանակումը:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն համագործակցությունը իրենց համապատասխան մարմինների միջև, հեղինակային իրավունքի և իրենց օրենսդրության սահմաններում՝ փոխառության իրավունքների փոխադարձ պաշտպանությունը:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն կապերը երկու երկրների երիտասարդների միջև և անմիջական համագործակցությունը՝ իրենց երիտասարդական կազմակերպությունների միջև:

Հոդված 9

Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն զբոսաշրջության զարգացումը երկու երկրների միջև:

Հոդված 10

Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն համագործակցությունը սպորտային կազմակերպությունների միջև, ինչպես նաև՝ յուրաքանչյուր երկրում սպորտային միջոցառումներին փոխադարձ մասնակցությունը:

Հոդված 11

Պայմանավորվող կողմերը պետք է համապատասխան եղանակով դյուրացնեն սույն Համաձայնագրում նշված բնագավառներում երկրներից յուրաքանչյուրում, կազմակերպված սեմինարներին, փառատոներին, մրցումներին, ցուցահանդեսներին, խորհրդաժողովներին, համաժողովներին և հանդիպումներին մասնակցությունը:

Հոդված 12

Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն անմիջական համագործակցությունը և փոխանակումները ոչ կառավարական կազմակերպությունների միջև՝ սույն Համաձայնագրում նշված բոլոր բնագավառներում:

Հոդված 13

Սույն Համաձայնագրում նշված գործունեության բոլոր տեսակները պետք է համապատասխանեն այն Պայմանավորվող կողմի պետությունում գործող օրենսդրությանը և կանոնակարգերին, որտեղ դրանք իրականացվում են:

Հոդված 14

Սույն Համաձայնագրի իրագործման նպատակով որպես Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության գլխավոր գործակալ հանդես կգա Բրիտանական խորհուրդը /British Council/:

Հոդված 15

Պայմանավորվող կողմերի ներկայացուցիչները անհրաժեշտության դեպքում կամ մյուս կողմի խնդրանքով պետք է հանդիպեն որպես խառն հանձնաժողովի անդամներ՝ քննարկելու սույն Համաձայնագրին առնչվող զարգացումները:

Հոդված 16

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրից:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմնա 5 տարի ժամկետով և դրանից հետո էլ կմնա ուժի մեջ մինչև 6 ամիս՝ սկսած այն օրից, երբ Պայմանավորվող կողմերից մեկը դիվանագիտական ուղիներով մյուսին գրավոր կերպով կժանուցի Համաձայնագրի դադարեցման վերաբերյալ:

Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Լոնդոն քաղաքում 1994 թվականի փետրվարի 9-ին՝ հայերեն և անգլերեն, բոլոր տեքստերը հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1994 թվականի փետրվարի 9-ից: